213

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

375015, Երեւան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 216-Ա «12» փետրվարի 2003 թ.

«ԴՈՒԲՐԱՎԱ» ՍՊԸ-ԻՆ՝ ԱՐԱՄԻ ՓՈՂՈՑԻ Հ.54 ՀԱՍՑԵԻ ԴԻՄԱՑ, 2-ՐԴ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԳՈՒՄ ԹԵԹԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐՈՎ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «ԴՈՒԲՐԱՎԱ» ՍՊԸ-ի հայտը, Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 02.12.2002թ. հ.18-09/7170 եզրակացությունը.

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» հ.286 որոշման 36 կետի «գ» ենթակետով, «ԴՈՒԲՐԱՎԱ» ՍՊԸ-ին (հետագայում կառուցապատող)՝ Արամի փողոցի հ.54 հասցեի դիմաց, 2-րդ հիվանդանոցի հարակից այգում թեթև կոնստրուկցիաներով առևտրի սրահի կառուցման նպատակով, վարձակալության իրավունքով, 15 տարի ժամկետով տրամադրել 20,0քմ մակերեսով հողամաս, որի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությանը /Ա.Գևորգյան/՝ Երևանի քաղաքապետի անունից կառուցապատողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

3. Ընդունել ի գիտություն, որ.

3.1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության հետ, գլխավոր հատակագծի թողարկման օրվանից, 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման, համաձայնեցման և շինարարության թույլտվության հայտի ներկայացման համար սահմանված է մեկ տարի ժամկետ:

3.3.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ՝ ներկայացնելով շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

4.Պարտավորեցնել կառուցապատողին՝

4.1.Հատկացված հողամասն օգտագործել միայն սույն որոշմամբ սահմանված նպատակներով և պայմաններով:

4.2.Առևտրի սրահը կառուցել թեթև կոնստրուկցիաներով, ճակատները լայն ապակեպատ բացվածքներով, առավելագույն բարձրությունը մինչև 3,5մ:

5.Առաջարկել Կենտրոնի թաղապետարանին /Գ.Բեգլարյան/.

5.1.«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. հ.91 որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքների համաձայն կառուցապատողին հանձնել շինարարության թույլտվությունը՝ ապահովելով համապատասխան տեղական տուրքերի գանձման հարցերը:

5.2.Կառուցապատողի հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր՝ սահմանելով շինարարության սկիզբը և ավարտը, ինչպես նաև նախագծով նախատեսված շինարարության ավարտի ժամկետը կառուցապատողի մեղքով խախտվելու դեպքում՝ գույքային պատասխանատվություն սահմանելու մասին:

6.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը (Ս.Կոտոլիկյան)՝ ապահովել սույն որոշման կատարման ընթացքում ՀՀ իրավական ակտերով նախատեսված քաղաքաշինական փաստաթղթերի ընդունումը և համապատասխան ձևակերպումների կատարումը:

7.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի ճարտարապետաշինարարական վերահսկողության վարչությանը (Հ.Մուրադյան)՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի և ՀՀ կառավարության 12.10.98թ. հ.624 որոշման համաձայն կառուցապատողի՝ սույն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության նկատմամբ իրականացնել պետական վերահսկողություն:

8.Նախազգուշացնել կառուցապատողին, որ սույն որոշման 5-րդ կետով նախատեսված շինարարության թույլտվությունն ստանալուց հետո, մեկ տարվա ընթացքում շինարարական աշխատանքները չսկսելու դեպքում շինարարության թույլտվությունը կճանաչվի առոչինչ:

9.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ-Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն.Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ԱՎԱԳՅԱՆ

ՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

375015, Երեւան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 1263-Ա «06» հունիսի 2003 թ.

«ԴՈՒԲՐԱՎԱ» ՍՊԸ-ԻՆ ԱՐԱՄԻ ՓՈՂՈՑԻ Հ.54 ՀԱՍՑԵԻ ԴԻՄԱՑ, 2-ՐԴ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԳՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Դուբրավա» ՍՊԸ-ի հայտը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության 07.05.2003թ. հ.18-09/2259 եզրակացությունը.

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» հ.286 որոշման 36 կետի «ա» ենթակետով, «Դուբրավա» ՍՊԸ-ին (հետագայում կառուցապատող) Արամի փողոցի հ.54 հասցեի դիմաց, 2-րդ հիվանդանոցի հարակից այգում առևտրի սրահի կառուցման համար վարձակալության իրավունքով տրամադրված /13.05.2003թ. հ.0035569 վկայական/ 20,0քմ հողամասին կից բացօթյա սրճարան կազմակերպելու նպատակով լրացուցիչ տրամադրել 150,0քմ մակերեսով հողամաս, վարձակալության իրավունքով, 15 տարի ժամկետով:

2.Սահմանել, որ.

2.1.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

2.2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք է հանդիսանում սույն որոշմանը կից ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

3.Լիազորել Կենտրոնի թաղապետարանին (Գ.Բեգլարյան) Երևանի քաղաքապետի անունից հողօգտագործողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լիազորված մարմնում:

4.Ընդունել ի գիտություն, որ Կենտրոնի թաղապետարանի հետ, գլխավոր հատակագծի տրամադրման օրվանից, 60-օրյա ժամկետում վարձակալության պայմանագիր չկնքելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Պարտավորեցնել կառուցապատողին տրամադրված հողամասն օգտագործել միայն սույն որոշմամբ սահմանված նպատակներով և պայմաններով:

178

6. Առաջարկել Կենտրոնի թաղապետարանին (Գ.Բեգլարյան).

6.1.«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի, ՀՀ կառավարության 02.02.2002թ. հ.91 որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքների համաձայն կառուցապատողին հանձնել շինարարության թույլտվությունը՝ ապահովելով համապատասխան տեղական տուրքերի գանձման հարցերը:

6.2.Կառուցապատողի հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր՝ նախագծով նախատեսված շինարարության ավարտի ժամկետը կառուցապատողի մեղքով խախտվելու դեպքում, գույքային պատասխանատվություն սահմանելու մասին:

7.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը (Հ.Սարգսյան)՝ ապահովել սույն որոշման կատարման ընթացքում ՀՀ իրավական ակտերով նախատեսված քաղաքաշինական փաստաթղթերի ընդունումը և համապատասխան ձևակերպումների կատարումը:

8.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետաշինարարական վերահսկողության վարչությանը (Հ.Մուրադյան)՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի և ՀՀ կառավարության 12.10.98թ. հ.624 որոշման համաձայն կառուցապատողի՝ սույն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության նկատմամբ իրականացնել պետական վերահսկողություն:

9.Նախազգուշացնել կառուցապատողին, որ սույն որոշման 6-րդ կետով նախատեսված շինարարության թույլտվությունն ստանալուց հետո, երկու տարվա ընթացքում շինարարական աշխատանքները չսկսելու դեպքում շինարարության թույլտվությունը կճանաչվի առոչինչ:

10.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ - Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն.Սարգսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ԱԶԱՐՅԱՆ

ԱՍ